

ՄԱՂԲԱՍԱՑԻՆԵՐԻ ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԷՖԵՆԴՅԱՆ Ս. Պ.

Պատմությունը շատ օրինակներ ունի երկխոս էթնիկական խմբերի վերաբերյալ: Հայերի և հրեաների համար դա սովորական երևույթ է: Աշխարհի բոլոր ծագերում սփռված այդ երկու ժողովուրդների էթնիկական միավորումները, մեծ ու փոքր խմբերով, ապրում և ստեղծագործում են իրենց ապրած երկրի, մասամբ նաև իրենց էթնիկական լեզվով: Այն մասին, որ Անդրկովկասում ապրում են հայեր, որոնք հայերենից բացի խոսում են նաև մերձկասպյան իրանական ժողովուրդների լեզուներից մեկով, գիտությանը մինչև XIX դ. կեսը հայտնի չէր: Խոսքը վերաբերում է Շամախու գավառի Մաղրասա գյուղի լեզվին: Մաղրասա և Քիլվար գյուղերի բնակիչների էթնիկական ծագման խնդիրը երբեք գիտական ուսումնասիրության առարկա չի եղել: Հրապարակված մի քանի ոչ մասնագիտական աշխատություններ, հողվածներ դիտողական, տեղագրական բնույթ ունեն, ինչպիսիք են՝ Ս. Բարխուտարյանի «Աղվանից երկիր և դրացիք» (Թիֆլիս, 1893), Մ. Սմբատյանի «Նկարագիր Սուրբ Ստեփանոս վանաց Սաղյանի» աշխատությունները (Տիֆլիս, 1896), Քաջբերունու «Բազմամիլիոն ժառանգություն» ձեռագիրը, ինչպես նաև բազմաթիվ իրարամերժ հողվածներ: Մաղրասացիների երկրորդ լեզվի վերաբերյալ, որը պարզ չէ, թե ինչու թաթերեն են կոչում, ռուսական արևելագիտությունը առանձին ուսումնասիրություն չունի. այն քննարկվում է թաթերեն լեզվի համակարգում՝ տալով դրանցից յուրաքանչյուրի՝ մյուսների հետ ունեցած նմանությունն ու տարբերությունը: Հայ իրականության մեջ բացառիկ արժեք ունի Ս. Ղալթաղյանի՝ մաղրասացիների երկրորդ լեզվի վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրությունը¹: Սակայն լինելով լեզվաբանական աշխատություն՝ այն չի շոշափում ծագումնաբանության խնդիր: Արևելագիտական մտքի ռուսական դպրոցը (Վ. Միլլեր, Բ. Միլլեր, Ա. Գրյունբերգ) թաթախոս հայերի էթնիկական ծագման հարցը ուսումնասիրության առարկա չի դարձրել: Դա բացատրվում է նրանով, որ իսկական թաթերին անառարկելիորեն ընդունել են իբրև իրանական ժողովուրդ, և էթնոսի բացահայտման կարիք չի եղել: Քննարկվել են միայն լեզվի հարցեր՝ առանց նկատի առնելու էթնիկական տարբերությունները: Նման մոտեցումը ոչ միայն հնարավորություն չի տալիս թաթախոս հայերի ազգային պատկանելության մասին պատկերացում կազմելու, այլև իր հիմքում սխալ է: Ելնելով լեզվական ընդհանրությունից՝ չի կարելի անտեսել այդ լեզվով խոսողների էթնիկական տարբերությունը, քանզի իսկական թաթերը պատկանում են իրանական էթնոսին, թաթախոս հրեաները՝ սեմական ընտանիքի հրեական ճյուղին, հայերը՝ հնդեվրոպականի՝ հայկական էթնոսին: Այդ երեք

¹ Ղալթաղյան Ս., Մաղրասացիների թաթերեն բարբառը (ՀՍՍՀ ԳԱ Լրագրեր հասարակական գիտությունների, 1970, N 3):

թաթախոսներն ունեն միայն լեզվական ընդհանրություն: Իհարկե, լեզուն ազգը բնորոշող գլխավոր գործոն է, բայց միակը չէ: Պատմությունն ունի անհամար օրինակներ, երբ լեզուն և էթնիկական պատկանելությունը չեն համընկնում:

Թաթագետ Բ. Միլլերը նշում է, որ թաթախոս հայերի լեզուն ուսումնասիրված է մասնակի և ոչ ճիշտ: Այդ միտքը խոսում է թաթախոս հայերի լեզուն առանձին և էթնիկական ծագման մեջ ուսումնասիրելու անհրաժեշտության օգտին: Մինչդեռ, ընդհանրապես ռուս թաթագետների մեկնաբանությունները ոչ միայն համոզիչ չեն, այլև սխալ են: Նրանց է պատկանում «մադրասացիները հայ-թաթեր են» «թևավոր» արտահայտությունը: Ի՞նչ է նշանակում հայ-թաթ (կամ հրեա-թաթ): Մադրասացիները կարող են կամ հայ լինել, կամ թաթ: Ուրեմն, խնդրի լուծման ելման կետը սխալ է ընտրված, այսինքն, մադրասացիները կամ հայեր են՝ յուրացրած թաթերենը, կամ էլ թաթեր են՝ յուրացրած հայերենը: Այդ հարցի պատասխանը ռուս գիտնականները չեն տալիս, մադրասացիների հայ լինելը ոչ հաստատում են, ոչ էլ ժխտում: Ելնելով ռուս թաթագետների այդ դիրքորոշումից և վկայակոչելով նրանց՝ իրենց ադրբեջանցի հորջորջող թուրք «գիտնականները», առանց հիմքի և ապացույցի, մադրասացիներին վերագրում են կամ թաթական ծագում, որոնց հայերը պարտադրել են քրիստոնեական հավատ և հայերեն լեզու, կամ էլ համարում են աղվանական ցեղերի մնացուկներ: Վերջին «վարկածը», անշուշտ, ոչ մի քննադատության չի դիմանում: Բավական է ասել, որ մադրասացիների երկրորդ լեզուն աներկբայելիորեն պարսկերեն լեզվի բարբառ է և ոչ մի կերպ չի կարող աղվանական ցեղի լեզու լինել: Ադրբեջանցի «գիտնականները» չեն կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ հայերն այդ տարածքում բնիկներ են: Ադրբեջանցիների թեկուզ այն կեղծ պնդումը, թե հայերը պարսիկներին պարտադրել են իրենց հավատն ու լեզուն, նշանակում է, որ հայերը եղել են այդ վայրում՝ պարսիկների հետ կողք կողքի և շատ ավելի վաղուց, քան քոչվոր թրքախոսների կողմից այդ տարածքի յուրացումը: Մակայն այս «վարկածը» խոցելի է բոլոր կողմերից: Նախ, պարսիկների այդպիսի զանգվածային հավատափոխությունն իր հետքը կթողներ գրավոր կամ բանավոր որևէ վավերագրի, հիշատակության մեջ: Այդպիսիք չկան ոչ պարսկական, ոչ հայկական աշխարհիկ և հոգևոր հիշողություններում: Հայերը պարսկական տիրապետության ներքո հավատափոխ և ազգափոխ կարող էին լինել, որի օրինակները քիչ չեն, իսկ պարսիկին ի՞նչը կարող էր ստիպել իր պետության մեջ, իշխող ազգի արտոնություններով հանդերձ, հավատափոխ և ազգափոխ լինելու, ձուլվելու հայերին: Կամավոր հավատափոխություն կամ ձուլում չի լինում: Իսկ պարսիկներն այդ հարկադրանքից զերծ էին: Թուրք «հետազոտողների» կարծիքով, մադրասացիները հայեր չեն, հետևաբար, պատկանում են կամ թաթական, կամ աղվանական ցեղերից մեկին: Նպատակը հայերին հայկական հողից կտրելը և նրանց թուրքական ծագում վերագրելն է:

Այս հարցում հայ գիտնականները տարակարծիք են. մի մասը չի ժխտում մադրասացիների հայ լինելը, մյուս մասն ընդունում է նրանց՝ իրանական

ժողովուրդ լինելու փաստը: Թե մեկ և թե մյուս խմբին պատկանող հայ գիտնականներն իրենց տեսակետները հաստատող ապացույցներ չեն ներկայացնում: Հայ արևելագիտական միտքն այդ խնդիրը լուսաբանելիս չպետք է հենվի ռուսական ավանդական, սակայն սխալ տեսակետի վրա: Անհրաժեշտ է խնդիրն ուսումնասիրել մյուս թաթախոսներից տարբերակման մոտեցումներով և, անպայման, ծագումնաբանությունից ելնելով: Կարևորն այն է, որ մադրասացիներն իրենց համարում են մաքուր, գտարյուն հայ քրիստոնյաներ: Մադրասացիների այդ ինքնաբնութագրությունն ունի իր անհերքելի ապացույցները պատմության մեջ եղած տեղեկությունների, նրանց կենցաղի, ապրելակերպի, կրոնի ու հավատալիքների, հայրենասիրության դրսևորումների մեջ²: Մադրասան անցյալ դարի սկզբի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, մանավանդ թուրքական Նուրի փաշայի՝ Բաքու կատարած արշավանքի (1918) ճանապարհին, Շամախի հայաշատ քաղաքի և շրջակա հայկական գյուղերի ապավենն է եղել: Գավառի բոլոր հայկական բնակավայրերի բնակիչները համախմբվել են Մադրասայում և, գյուղը դրսից շրջափակելով, անհավասար կռվում դիմադրել են կանոնավոր բանակին: Տղամարդկանց հետ կողք կողքի մարտնչել են անգամ երիտասարդ կանայք և աղջիկները: Ի վերջո, երկու կողմից շղթա կազմած, իրենց մեջ առած ծերերին, կանանց ու երեխաներին, կիրճի միջով նահանջել են դեպի հյուսիս՝ մոլոկանների գյուղեր, այնտեղից էլ՝ Բաքու³: Մադրասացիները նվիրական հուշեր են պահել այդ մասին:

Մադրասացիները կտրականապես մերժում են իրենց վերագրվող *հայ-թաթեր* անվանումը: Իրենց համարում են մաքուր հայեր, իսկ իրենց երկրորդ լեզուն՝ փարսերեն (ասել է՝ ֆարսերեն): Մադրասացիների համար ոչ միայն երկրորդ լեզուն է փարսերեն, այլև իրանական ժողովուրդների բոլոր լեզուները, ներառյալ նաև պարսկերենը: Այսինքն, թաթախոսները՝ իսկական թաթերը, թաթախոս հրեաները, թալիշները, լախիջները, զառաթցիները, նաև հայերը խոսում են մի ընդհանուր լեզվով, որը կոչվում է փարսերեն: Մադրասացիները, մերժելով իրենց երկրորդ լեզուն թաթերեն համարելը, գտնում են, որ այն ավելի մոտիկ է թալիշերենին, քան Ապշերոնի թաթերենին:

Թալիշները հմուտ բրուտագործներ էին: Նրանք սայլերով Շամախու տարածք էին բերում իրենց արտադրանքը՝ կժեր, կուլաներ և կավից պատրաստած կենցաղային այլ իրեր: Վաճառքի վայր էին ընտրում ոչ թե Շամախին, որտեղ հայերից բացի ապրում էին նաև թուրքեր, այլ Մադրասան, որի բնակիչների հետ ազատ հաղորդակցվում էին: Թալիշները թուրքերին վերաբերվում էին հակակրանքով, հայերի նկատմամբ տածում էին բացահայտ համակրանք: Այդ պարագան որոշակի մտերմություն էր ստեղծում նրանց միջև՝ որպես միևնույն (փարսերեն) կամ նման լեզուներ կրողների: Գիտությունը չի հաստատում մադրասացիների երկրորդ լեզվի թաթերեն, թալիշերեն կամ իրանական այլ լեզու

² ՀՀ Պատմության պետական թանգարան, ֆ. 278, ց. 4, գ. 4, թերթ 56:

³ Այս մասին տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Ե., 1997, էջ

լինելը: Փարսերենն իր նմանություններով հանդերձ, տարբերվում է իրանական ժողովուրդների մյուս լեզուներից: Փարսերենի նմանությունը պարսկական բարբառներին ավելին չէ, քան միևնույն լեզվի տարբեր բարբառների միջև եղած նմանությունը: Այդ փաստը չեն ժխտում նաև ռուս գիտնականները: Հարց է առաջանում, արդյո՞ք փարսերենը թաթական լեզու է, թե՞ պարսկերենի և հայերենի յուրահատուկ խառնուրդ: Թաթագետները, առանց բացառության, գտնում են, որ փարսերենը պահպանել է իր նախակգրական՝ իրանական ձևը և չեն բացատրում ինչու: Դա, իհարկե, չի կարելի բացատրել հայերենի ազդեցությամբ: Կարծում ենք, որ իրանական այդ լեզուն, հայերի կողմից յուրացված լինելով միջնադարում, գուցե ավելի վաղ, հայկական միջավայրում մնացել է իր նախկին վիճակում:

Ուշագրավ է լահիջների (Լահիջ գյուղ) դեպի թաթերենն ունեցած վերաբերմունքը: Նրանք իրենց անվանում են լահիջներ և նույնպես մերժում են իրենց վերագրվող թաթ և թաթերեն անվանումները:

Թաթախոսները չեն կարծում, որ իրենք թաթեր են և իրենց լեզուն թաթերեն է: Այստեղ ոչ մի առեղծված չկա: Թաթ տերմինը էթնիկական իմաստ չի ունեցել: Այդ մասին գրել են թե ռուս և թե հայ գիտնականները: Իրանական լեզվով խոսող նստակյաց ժողովուրդներին եկվոր՝ քոչվոր թուրքերն են անվանել թաթ, որը գիտնականները բացատրում են՝ «թուրքերեն չիմացող, ոչ թուրք»: Որոշ հետազոտողներ այլ կարծիքի են, սակայն ոչ ոք չի ժխտում, որ այն էթնոս չի նշանակում: Պարսկական հանրագիտարանում *թաթ* բառը բացատրվում է իբրև «իր պարսկական լեզուն պահպանած ցեղ, որն ապրում է Կովկասում»: Այն էթնոսի իմաստով օգտագործվել է հետագայում: Անհիմն չէ թաթախոս ժողովուրդների կողմից այդ տերմինի մերժումը: Եթե «թաթը» էթնոսի նշանակություն չունի, ապա էթնիկական խմբերի լեզուն ինչու՞ պետք է թաթերեն կոչվի: Իրանական այդ էթնիկ խմբերը, անշուշտ, պետք է ունենան իրենց ցեղանունը, որը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից: Նրանց պայմանականորեն «թաթ» անվանելով՝ լեզուն էլ կոչել են թաթերեն:

Երկլեզվության և մադրասացիների ծագումնաբանության առեղծվածի հանգույցը պետք է լուծեն հայ գիտնականները: Մինչդեռ Հայկական Սովետական Հանրագիտարանում «թաթ» բառի բացատրության մեջ թաթերի բնակության վայրերի թվում նշվում է նաև «լուսավորչական կրոնը դավանող թաթերի՝ Մադրասայում և Քիլվարում բնակվելու մասին»⁴: Եթե առաջնորդվենք հանրագիտարանի հոդվածագրի տրամաբանությամբ՝ ելնել երկլեզվության փաստից, ապա լուսավորչական կրոնը դավանող հայերի մի մասին պետք վերագրենք այլ ազգերի պատկանելություն, քանզի հայ ժողովրդի զգալի մասն այլախոս է:

Մի այլ օրինակ. «Իրաննամե» հանդեսում Ս. Ղալթադյանի «Հայ-պարսիկները (հայ-թաթերը) և նրանց լեզուն» հոդվածի խմբագրականում գրված է.

⁴ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 120:

«...եզակի մի երևույթ է հայ-թաթերի՝ էթնիկ իրանցիների, ամենայն հավանականությամբ, պարսիկների դեպքը, որոնք ունեն հայկական ազգային ինքնություն, պատկանում են հայ Առաքելական եկեղեցուն, խոսում են հայերեն, սակայն մինչև օրս պահպանել են իրենց լեզուն՝ որպես առօրյա ներքին հաղորդակցության միջոց»⁵։ Ի՞նչ է նշանակում հայ-պարսիկ։ Ինչպե՞ս կարող է հայը լինել նաև պարսիկ, կամ պարսիկը՝ նաև հայ։ Եթե «մինչև օրս պահպանել են իրենց լեզուն»՝ պարսկերենը, նշանակում է՝ մադրասացիները եղել են պարսիկներ և հայերի հարկադրանքով ազգափոխ են եղել։ Այդ միտքը հայտնագործություն չէ։ Այդ մասին գրել և գրում են օտարները։ Ո՞վ կղիմագրավի նրանց, եթե վերջիններս իրենց «ճշմարտությունն» ապացուցելու համար վկայակոչեն հայկական աղբյուրները։ Լուսավորչական կրոնը դավանող հայերի մեծ մասը ռուսախոս, անգլիախոս, ֆրանսախոս, արաբախոս, թրքախոս են, սակայն նրանք մեզ համար օտարածին չեն։ Իսկ պարսկախոսները, որոնց պարսկերենը «առօրյա ներքին հաղորդակցության միջոց է», հայեր չեն։ Պարսկախոս հայ կամ պարսկահայ՝ հասկանալի է, բայց պարսիկ-հայ՝ Տեղին է հարցնել՝ ինչո՞վ են հիմնավորում իրենց պնդումն այս վարկածի հեղինակները, ի՞նչ աղբյուրների վկայությամբ։ Ինչու՞ թրքախոս հային, որը հարկադրաբար հավատափոխ և ազգափոխ է եղել՝ մոռացել է իր մայրենի լեզուն, խոսում, մտածում և աղոթում է թուրքերեն, մենք անվանում ենք հավատափոխ, բայց հայ, իսկ իր «հայկական ազգային ինքնությունն» ունեցողին՝ պարսիկ։ Մենք մարդասիրական վերաբերմունքը մեր հավատափոխ ազգակիցների նկատմամբ չենք մերժում, սակայն «հայկական ազգային ինքնություն» ունեցող հայերին պարսիկներ անվանելուն դեմ ենք։

Մադրասացիների էթնիկ լեզուն հայերենն է, փարսերենը հետո է թափանցել և ածանցյալ է հայերենին։ Տվյալներ չունենալով, թե երբ է փարսերենը մադրասացիների լեզվի մեջ թափանցել, նրա՝ վաղնջական հայկական անխառն գյուղ լինելու և լեզուն հայկական լինելու մասին ունենք հավաստի վավերագիր։ Մադրասան հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է 1403 թ.։ Մատենադարանում պահպանվում է մի ձեռագիր՝ «Մեկնութիւնք եւ քարոզք Մատթեոսի վարդապետի, աշակերտի Գրիգորի Տաթևացույ, գրեալ ձեռամբ Թումայի Թավրիզեցոյ ի տեղէն Մատրասա»⁶։ Ձեռագրի վերջում նշված է, որ այն գրել է Թումա Թավրիզեցին, և նրա հայրն է Կոստանդ քահանան։ Նշանակում է, հիշատակարանի վկայությամբ, Մադրասան այն ժամանակ հայկական գյուղ է եղել՝ հայ բնակչությամբ, իր եկեղեցով և քահանայով։

Կասկած չի հարուցում նաև այն, որ, եթե հիշատակարանում նշված տարեթվին կար Մադրասա գյուղը, ապա պետք է կարծել, որ այն դրանից առաջ էլ

⁵ Իրաննամե, 1995, N 1, էջ 8:

⁶ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ **Խաչիկյան Լ. Ս.**, մասն Ա, Ե., 1955, էջ 31-33:

գոյություն է ունեցել: Մադրասայի հայկական լինելու լուրջ վկայություն է այնտեղ խաչքարերի առկայությունը⁷: Խաչքարերը երեքն են, որոնցից մեկն ընթեռնելի է և թվագրված է 1598-ով: Դա անվերապահ ապացույց է գյուղի հայկական ծագման մասին, քանզի խաչքարն ունի միայն հայկական ակունք: Այն ոչ թե համաքրիստոնեական, այլ միայն հայկական երևույթ է: Անգամ խաչքար բառը թարգմանել հնարավոր չէ, որովհետև նրա իմաստը միայն նրա հայկական անվան մեջ է: Հիշատակարանում երկլեզվության մասին ոչինչ չկա: Այն հետազայում է առաջացել, այլապես չէր կարող վրիպել հիշատակարանի հեղինակի գրչից: Այդ ամենը փաստում է, որ Մադրասան արդեն միջնադարում եղել է հայաբնակ մեծ գյուղ, նրա լեզուն եղել է հայերենը, իսկ փարսերենն ածանցյալ է:

Իրանական ազգաբանության մասնագետ, պրոֆ. Գ. Ասատրյանն իր աշխատություններում ընդհուպ մոտենում է այդ կնճռոտ խնդրի լուծմանը, իրանական ժողովուրդների ընտանիքին պատկանող զազա ցեղի լեզվի մասին նա գրում է. «...զազաների լեզուն արևմտաիրանական բարբառներից միակն է, որի հնչյունաբանական համակարգն ունի մի շարք կենտրոնացված պայթաշփական (ց, ծ, ձ) հնչյուններ»⁸: Իրանական ժողովուրդներն իրենց բառապաշարում այդ հնչյունները չունեն, և զազաների լեզվում դրանց գոյությունը բացառություն է: Զազաները պատկանում են իրանական էթնոսին, նրանց լեզուն ևս իրանական է: Սակայն արտաբերում են այդ հնչյուններով բառեր: Զազա լեզվի այդ առանձնահատկությունն ունի նաև մադրասացիների խոսակցական փարսերենը: Գայթակղիչ է այդ նմանության հիման վրա մադրասացիների և զազաների լեզվի ու ծագումնաբանության միջև եզրեր փնտրելը: Համենայն դեպս, նմանությունը բացատրություն պետք է ունենա: Զազաների լեզվի այդ առանձնահատկությունն առեղծված է, մինչդեռ մադրասացիների պարագայում այն միանգամայն հասկանալի է. նրանք, հայ լինելով, կարողանում են արտաբերել այդ հնչյունները: Համոզված լինելով մադրասացիների հայ լինելու մեջ և զազաների հայկական ծագման վերաբերյալ փաստեր չունենալով՝ կարծում ենք, որ այդ երկու լեզուների բաղդատումը և ուսումնասիրությունը միասնության մեջ լույս կսփռեն զազաների լեզվի առանձնահատկության առեղծվածի վրա: Համոզվելու համար բերենք մի քանի օրինակ մադրասացիների **ծ, ճ, պ** հնչյուններով փարսերենից.

Ծըլ - քաղցր արմտիք	Ճինջելի - թաց	Պակալա - մոշ
Ծըլա - ծիլ	Ճըռ - փոքր, մանր	Պուշտ - բշտիկ
Ծըլ-ծըլ- ծորալ, ծորալով	Ճլազ-նվազ, տհաս	Պուտա - կորիզ
Կեծկեծի - կայծակ	Ճեյրա- ճախարակ	Պակ - գորտ:

⁷ Այս մասին տե՛ս Կարապետյան Ս., Մադրասա գյուղը և նրա հուշարձանները (Պատմա-բանասիրական հանդես, 1989, N 2, էջ 225-233):

⁸ **Асатрян Г.**, *Этюды по иранской этнологии*, Е., 1998, с. 15.

Վկայակոչելով պարսիկ հեղինակին՝ Գ. Ասատրյանը գրում է, որ թայշայի ցեղը, նախկինում եղել է քրիստոնյա և գաղթել է Հայաստանից:

Այնուհետև մեջբերում է XIX դ. վերջի պարսիկ հեղինակ Միրզա Շոքր-Օլլախ Սանանդադի «Թոխֆե-յե-Նասերի» աշխատությունից՝ թայշայիների մասին. «Ասում են, որ նրանք եղել են քրիստոնյաներ Հայաստանի քրդերից, եկել են Քրդստան և բնակվել են Շախրեգուրում, Սուլեյմանիեում, Քերմենշահում: Այժմ նրանք կազմում են 50 ընտանիք և ապրում են Ջավանրուդում»⁹: Գ. Ասատրյանը գրում է, որ քրիստոնյաներից (հայերից) թայշայիների ծագման վերաբերյալ հավաստի տվյալներ չկան: Հայ գիտնականի՝ քրիստոնյա քրդերի փոխարեն փակագծերում հայ գրելը, կարծում ենք՝ պատահական չէ: Գուցե և ինչ-որ առնչություն կա թայշայիների, այսինքն՝ պարսկախոս հայերի և մադրասացիների միջև: Եթե պարզվի, որ թայշայիների գաղթի ճանապարհը դեպի Պարսկաստան անցել է Շամախու տարածքով (որը հավանական է), ապա կարծում ենք՝ տրամաբանությունից զուրկ չէ այն, որ նրանց մի մասը կարող էր հանգրվանել այդտեղ: Անշուշտ, թայշայիները հայեր են, և պարսիկ գիտնականները նրանց մասին իմացել են այն ժամանակ, երբ նրանք յուրացրած են եղել պարսկերենի որևէ բարբառ, ոչ թե քրդերենը, որը տարբերվում է փարսերենից (քրդերի զանգվածային հավատափոխությունը գրանցված չէ, բացի դրանից, ըստ Ն. Ադունցի, մինչև XVI դ. Հայաստանում քրդեր չեն եղել): Կամ գուցե քրիստոնյա թայշայիների մի մասը, կրոնական անհանդուրժողականության պատճառով, արտագաղթել է դեպի քրիստոնեական աշխարհին մոտիկ տարածքներ և, հանգրվան գտնելով այդ վայրերում, ձուլվել է հայ մադրասացիների հետ: Իհարկե, «գուցեներով» խնդիրը լուծել հնարավոր չէ, անհրաժեշտ է լուրջ մասնագիտական ուսումնասիրություն: Այնուհանդերձ, այս վարկածի օգտին է խոսում նաև մի այլ փաստ: 1993 թ. ռուսերեն լեզվով (Գ. Ասատրյանի թարգմանությամբ, առաջաբանով և ընդարձակ ծանոթագրություններով) լույս է տեսել Էնայաթ-Օլլա Ռեզայի աշխատությունը: Ժամանակակից պարսիկ գիտնականը վկայակոչում է XV դ. պատմագիր Խամդուլլա Մուստաուֆի Ղազվինիին, որն իր «Նուզխաթ-Ուլ-Կլուբ» գրքում թվարկում է պատմական Ատրապատականի բնակավայրերը, որոնց թվում նաև Սարավ, Սարաբ, Ուջան, որոնք համընկնում են Մադրասայի տարածքի տեղանունների հետ¹⁰: Մադրասա գյուղի հյուսիս-արևմտյան մասը կոչվում է Սարավ (Սարավի փողոց, Սարավի մահլա, Սարավի բաղեր և այլն), գյուղի հանդիպակաց սարահարթը, Մադրասա և Քերքենջ գյուղերի միջև Սարաբիլ (Սարաբիլի նոուրը, Սարաբիլի բաղերը և այլն): Սարավ և Սարաբ բնակավայրերի գոյությունը պատմական Ատրապատականում, նույն տեղանունների առկայությունը Մադրասայում (Սարաբիլ նշանակում է փոքր Սարաբ, ինչպես՝ Սարաբիկ, փոքր Սարաբ՝ Ճրո Սարաբ) մեզ հուշում են թայշայի պարսկախոս

⁹ Նույն տեղում, էջ 85:

¹⁰ Эняят Олла-Реза, *Азербайджан и Арран, Е., 1993, с. 38.*

քրիստոնյաների, այսինքն՝ հայերի և նրանց ենթադրյալ կապի մասին Մադրասայի հայ բնակչության հետ: Եթե ընդունենք, որ կրոնական անհանդուրժողականության հետևանքով թայշայիների մի մասն արտագաղթել է քրիստոնյա երկիր, ապա կարելի է ենթադրել, որ նրանք հանգրվանել են Մադրասայում և հարակից գյուղերում: Ռուս թաթագետները տեղեկություն են տալիս այդ տարածքում թաթախոս այլ գյուղերի մասին:

Ուրեմն, Մադրասայում, որը դեռևս 1403 թ. առաջ հայկական գյուղ էր իր եկեղեցով և բնակչությամբ, հետագայում ներգաղթած պարսկախոս թայշայիները կամ ուրիշ այլ պարսկախոս հայեր ձուլվել են տեղի հայերի հետ և ստեղծել իրենց պարսկերենը, որպես ածանցյալ լեզու՝ այն կոչելով փարսերեն: Փոխադարձաբար, հայերը յուրացրել են իրանական լեզուն, իսկ պարսկախոսները՝ տեղի հայերեն բարբառը: Պարսկական տեղանունների նույնությունը Մադրասայի տեղանունների հետ նույնպես վկայում է այդ մասին: Գաղթականներն իրենց նախկին բնակավայրերի տեղանուններով հավանաբար անվանել են նոր բնակավայրերը:

Լուրջ մտորումների տեղիք է տալիս մի այլ խնդիր ևս. մադրասացիների փարսերենում հանդիպում ենք հայերեն բառերի, որոնք գոյություն չունեն Շամախու բարբառում և մադրասացիների խոսակցական հայերենում, ինչպես՝ վեշպերով - ոչ բարով, կիրյոդ - գրոդ, կիրյոդ բարդա - գրոդի տարած, անթամալուժ - անդամալույծ, խուրծըն - խուրձ, պընակալ - բնակալ:

Հայերեն բառերն այնպես են սերտաճել փարսերենին, որ դժվար է զանազանել փարսերենից, և պահանջում են լուրջ ստուգաբանություն: Այդ փաստը, ուզենք, թե չուզենք, վկայում է այն մասին, որ գրական լեզվի բառերը փարսերենի մեջ թափանցել են մինչև մադրասացիների՝ Շամախու բարբառը յուրացնելը, կամ Մադրասայի բնակչության մեջ ընդգրկված թայշայիները կամ ուրիշ պարսկախոս հայեր են բերել իրենց հետ: Նաև հնարավոր է, որ մադրասացիները գաղթել են Պարսկաստանի որևէ հայ գաղթօջախից և իրենց հետ բերել են գրական հայերեն բառեր: Նշանակում է՝ մադրասացիները Հայաստանից գաղթել են Պարսկաստան և այնտեղից՝ Մադրասա: Անցյալ և նախանցյալ դարերի հայկական մամուլում այդ մասին տեղեկություններ կան, որտեղ նույնիսկ տալիս են արտագաղթի վայրերի անուններ, սակայն դրանք ամենևին հիմնավորված չեն և զուրկ են գիտական բացատրությունից: Հայ և օտարազգի որոշ գիտնականներ թաթախոս հայերի ծագման մասին տարբեր վարկածներ են առաջ քաշել: Շատերը հնարավոր են համարել, որ թաթախոս հայերը, մասնավորապես, մադրասացիները, գաղթել են Իրանի Սպահան քաղաքից: Մ. Բարխուտարյանը գրում է. «Մադրասայի բնակիչները, որ գաղթած են Սպահանի կողմից, խոսում են պարսկերեն բարբառով, որ մերձություն ունի Լփնաց և Լահճաց բարբառի հետ, սակայն ամենքը գիտեն հայերեն»¹⁷: Ակադ. Հ. Աճառյանը գրում է. «Զարխուեցիք գաղթել են Նոր Զուղայի Ղարաղան և Ֆերա գյուղերից, մադրասեցիք՝ Սպահանի կողմից, սաղիանցիների կեսը՝ հին Նախիջևանից, Պարսկաստանից և Ար-

¹⁷ Բարխուտարյան Մ., Աղվանից երկիր և դրացիք, էջ 167:

ցախից»¹²: Հ. Աճառյանի վկայությունը գալիս է հաստատելու Մ. Բարխուտարյանի՝ պարբերական մամուլում (հատկապես «Նոր Դար» օրաթերթում) բերած տվյալները՝ մադրասացիների մի մասի՝ Սպահանից ներգաղթելու մասին: Անվերապահորեն վստահելով Հր. Աճառյանին՝ կարծում ենք, որ այդ տողերը բավարար չեն ներգաղթի ժամանակի և ներգաղթից առաջ հայկական գյուղի գոյության մասին լրիվ պատկերացում ունենալու համար:

Ելնելով վերոհիշյալ տվյալներից՝ հավանական ենք համարում հետևյալ վարկածը. Մադրասա գյուղը հիմնվել է Մադրասա անունով, և նրա կազմը համալրել են Սպահանից ներգաղթած, պարսկերենը յուրացրած հայերը: Այլ կերպ չէր կարող լինել, քանզի Մադրասան գոյություն է ունեցել մինչև շահաբայան բռնազաղթը և Սպահանի գաղթօջախի ձևավորվելը: Հայ բնակչություն Պարսկաստանում եղել է Սասանյանների տիրապետության ժամանակներից ի վեր և, անշուշտ, Սպահանի կողմերում, մինչև բռնազաղթը:

Այն փաստը, որ Մադրասան հայաթափվել է, այնտեղ ապրում են թուրքեր (և լավ հայտնի է, թե ինչպես են վարվում թուրքերը հայությունը վկայող նյութական մշակույթի հետ), հրամայական պահանջ է դարձնում այդ խնդրի լուսաբանմամբ զբաղվելը: Հակառակ դեպքում գալիք ուսումնասիրողների համար ոչինչ չի մնա Մադրասայում՝ որպես հայության բնակավայրի ապացույց:

К ВОПРОСУ О ДВУЯЗЫЧИИ МАДРАСИНЦЕВ

ЭФЕНДЯН С. П.

Резюме

На основе литературных источников, а также образцов материальной культуры доказывается армянское происхождение двуязычных мадрасинцев, у которых доминирует армянский.

Еще в средневековье Мадраса являлась армянским поселением, где проживали армяне-христиане. Причину двуязычия можно объяснить тем, что диалект персидского языка мадрасинцев приобретен позже и прививался переселенцами двуязычными армянами из Исфагана и других армянских колоний Персии.

¹² Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 164: